ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» նոյեմբերի 2023 թվականի N: 448-Ա ք.Գյումրի

ԷՄՄԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՋԱՋՈՒՌ ԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 16-րդ հոդվածի 8-րդ մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգի» 33-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 1-ի N 191-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 1-ի դրական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Էմմա Սարգսյանին 2023 թվականի նոյեմբերի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

Ա.ՄԱՐՏԻԿՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է